



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՄԱՍՆԱՎՈՐ ԵՎ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԳԱՎԱԶԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏՎԶՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ



որին Ս. Օծուրյուն Վեհափառ Հայրապետը, Իր գանձակալության առաջին իսկ օրերից, հանդես է եկել որպես «սիրող և նախանձայն զ պանդուխտության և կեղեցական կարգաց և արարողութեանց»:

Գերագույն Հոգևոր Խորհրդի 1958 թվականի հուլիսի 8-ի նիստում Վեհափառ Հայրապետի հրահանգով և առաջարկով ֆեկուրյան առևմտյան մի շատ կարևոր հարց, որ սերտորեն կապված է մեր եկեղեցու հին կարգերի պահպանության, եկեղեցու կյանքի և պայծառության ու հավատացյալների կրոնա-բարոյական ֆրիստոնեական դաստիարակության հետ:

Վեհափառ Հայրապետի կողմից Գերագույն Հոգևոր Խորհրդին ներկայացված հարցն էր «վարդապետ ձեռնադրվելու և ծայրագույն վարդապետության աստիճան ստանալու անհրաժեշտ նախապայմանները»:

Գերագույն Հոգևոր Խորհուրդը սրտագին գոհունակությամբ ընդունեց Վեհափառ Հայրապետի առաջարկը և խնդրեց նորին Ս. Օծուրյունից՝ այսուհետև խստությամբ պահպանել հին կարգը, ըստ որի, մասնավոր կամ ծայրագույն վարդապետական իշխանության աստիճան ստանալու համար, թեկնածուից պահանջվում էր գրավոր մի աշխատություն՝ կրոնա-եկեղեցական, եկեղեցապատմագիտական և կամ եկեղեցա-բանասիրական նյութերով:

Մասնավոր կամ ծայրագույն վարդապետության աստիճան ստանալու համար ներկայացված աշխատությունը պետք է ֆեկուրյան

Գերագույն Հոգևոր Խորհրդի նշանակած մի հանձնաժողովի կողմից, որը հետ ֆեկուրյան կորոշի թեկնածուի արժանավորությունը և կխնդրի Վեհափառ Հայրապետից՝ շնորհել թեկնածուին համապատասխան աստիճան:

Կանխրեի Եպիսկոպոսական ժողովը իր 1958 թվականի մարտի 8-ի Ը նիստում զբաղվել էր եկեղեցական տիտղոսների հարցով և եկել էր այն ընդհանուր եզրակացության, որ «ՏԻՏՂՈՍՆԵՐՈՒ ՏՎԶՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀԱՐԿ Է ԳՈՐԾ ԴՆՆԸ ԱԶԱԼԸ ԶՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՎԱԳՈՒԹՅԱՆ, ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅԱՆ, ԾԱՅՐԱԳՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՔՈՒԹՅԱՆ ՏԻՏՂՈՍՆԵՐԸ ՏԱԼ ՄԻԱՅՆ ՍՏՈՒԳԱՊԵՏ ԱՐԺԱՆԱՎՈՐՆԵՐՈՒՆ»:

Վեհ է և սուրբ՝ հոգևորականի կոչումը, ասպարեզը, ծանր ու պատասխանատու՝ «հրեշտակալուն այն պաշտոնը», որին կոչվում է վարդապետը: Այս պատաստով Պողոս առաքյալը պատվիրելով պատվիրում է իր Տիմոթեոս աշակերտին՝ «ձեռս վաղվադակի յուրով վերայ մի՛ դնել» (Ա Տիմ. Ե 22), որովհետև «ոչ որ գանձն ընծայեցուցանէ՛, նա է ընտրեալ, այլ գոր Տէրն ընծայեցուցանէ»: Դրա համար հարկ է, որ «մանրակրկիտ ֆեկուրյամբ, արբուն հսկողությամբ» նկատի առնվեն մասնավոր և ծայրագույն վարդապետական իշխանության թեկնածուների «անստգիտ գնացք»-ը (ընթացք), անթերի գիտությունը, ուսումնականությունը, նկարագրի կայունությունը, կոչման գիտակցությունը, «անբամբաս ֆաղաֆավարություն և այլ ինչ բազմապատիկ կատարելություն»-ը (Մաշտոց):

Ինչպես Հին Կտակարանում ՕՐԵՆՔԻ ՎԱՐԳԱՊԵՏՆԵՐԸ մեծ ազդեցություն և հեղինակություն էին վայելում իրենց գիտնականությանը և ուսումնականությանը. օրենքի բանիմաց հասկացողությանը և մեկնությանը, նոր Կտակարանում ևս, Եկեղեցու հոգևոր տնտեսության և կառավարության մեջ, մեծ տեղ էին զբաղում ՎԱՐԳԱՊԵՏՆԵՐԸ: Պողոս առաքյալը գրում է. «Եւ զորս եղև Աստուած յեկեղեցուց այս են. նախ ԱՌԱՔԵԱԼՍ, Երկրորդ ՄԱՐԳԱՐԷՍ, Երրորդ ԶՎԱՐԳԱՊԵՏՍ» (Ա Կորնթ. ԺԲ 28): Վարդապետը, որնմն. Եկեղեցու երեք գլխավորներից մեկն է:

ՎԱՐԳԱՊԵՏ բառը նշանակում է ՈՒՍՈՒՑԻՉ, ՈՒՍՈՒՑԱՆՈՂ, ԱՌԱՋՆՈՐԴ ՈՒՍՄԱՆ, որից և վարդապետել՝ սովորեցնել, ֆարոգել բառերը, վարդապետություն բառը՝ որպես ուսուցում, ֆարոգություն: Վարդապետները «ճշմարիտ Բանին ֆարոգության աշակերտ» են, որնմն գրգռություն բանին Աստուծոյ ուսուցանեն, «զմեզ լուսատրեն, զգիշեր մեղաց և զխաարանգիտության փարատեն». այլ խոսքով՝ Եկեղեցու վարդապետության և դավանության գաղափարախոսները, ուղղափառության երշմարիտ պաշտպաններ են, մեկնիչ ու ֆարոգիչ, «ձիքենիք յոք տնկեալ կան ի սուրբ Եկեղեցիս և յարագուարն դալարութեամբ պատրաստեն զնիւր լուսոյ լապտերաց հոգւոց և զպատգամս Աստուծոյ բերեն առ ժողովուրդս, ֆարոգեն և իմաստասիրեն, ֆանգի աստուածաբան են և աստուածամիտ»:

Ճշմարտության վարդապետ, գերահանճար հոտոր և սուրբ հաստոյ, անյաղբ ախոյանան՝ Գրիգոր Տառնացի շատ գեղեցկորեն է բնութագրել ՎԱՐԳԱՊԵՏԻ կոչումն ու առաքելությունը: Նա գրում է. «Վարդապետն իշխան է բանից (խոսքի իշխան), որ հրամայէ և ուսուցանէ, Եկեղեցոյ տեսական իմաստասէր, որ մտօք և բանին տեսանէ և ֆենէ և ուսուցանէ և խառնէ գաշակերտս, իսկ նոքա զժողովուրդս» (Տառնացի, «Գիրք ֆարոգության, որ կոչի Ջմերան հատոր», — «Նորին ֆարոգ վարդապետաց և եպիսկոպոսաց», էջ 163—165):

Գրիգոր Տառնացին վարդապետների կոչման մասին խոսելով նրանց բաղադատում է վարդի հետ. «Վարդն ծաղիկ՝ ունի բազում յատկությունս որ յարմարի վարդապետին», և պահանջում է, որ վարդապետները զինված լինեն գիտությամբ, հավատով, սրբությամբ և առաքինությամբ, «վարդապետն բանի և արդեամբ զօրաուր լիցի և արի և անյաղբելի ի մէջ բշնամեաց... որպէս պարիսպ և եզր Եկեղեցոյ»:

Մեր Եկեղեցու կյանքում էլ շատ հին է «վարդապետ» կոչման գործածությունը: Գ. Տառնացին գրում է. «յաղագս մեր բոցափայլեազ աստիճան ֆանանայապետու-

րեան ի Սրբոյն Գրիգորէ... աստիճան վարդապետութեան՝ առ Սուրբն Մեսրոպ... և յայնմհետէ՝ աստիճան վարդապետութեանս յաշորդեցաւ առ միմեանս» (նույն տեղում, էջ 161):

Մեր գիտուն վարդապետները, Հայաստանի զանազան գավառներում, վանքերի մէջ իրենց շուրջ հավաքում էին բազմաթիվ աշակերտներ և ուսուցանում էին նրանց: Իսկ ծայրագույն վարդապետները գիտնականի հռչակ էին վայելում և, որպես կանոնական սովորություն, ամեն մի բնում իրավունք ունեին ֆարոգելու բեմից, որպես Հայաստանյայց Եկեղեցու նշմարիտ ֆարոգիչներ: Արժանավոր վարդապետները դարուց դար փոխանցեցին «զվարդապետութեան աստիճանն իւրեանց աշակերտաց, և նոքա այլոց ուղղափառ վարդապետաց Ազգիս Հայոց մինչև ցմեր իսկ աւուրս»:

Վարդապետ բառը շատ հաճախ հիշատակվում է մեր հին մատենագրության մեջ իր լիիրավ արժեքով և նշանակությամբ, որպես «ուսուցանող», «ուսուցիչ» իմաստով: «Վարդապետ» անունը, որպես գիտական տիտղոս կամ կոչում, տրվում էր առանձին հանդիսություններ, ինչպես նշված է Մաշտոցում: Դրանով իսկ վարդապետները իրավունք էին ստանում ուսուցանելու, ֆարոգելու ժողովրդին և իբրև նշան այդ կոչման՝ կարող էին ձեռներին գավազան բռնել: Վարդապետական գիտական կոչումը տալիս էին միայն վարդապետները, վարդապետության քեկնածուի գիտական պատրաստությունը քննելուց և արժանավորությունը հաստատելուց հետո միայն: Եղել են եպիսկոպոսներ, պատրիարհներ՝ առանց վարդապետության այդ գիտական կոչումը ունենալու:

Բայց դժբախտաբար միշտ չէ, որ խստությամբ պահպանվել է մասնավոր և ծայրագույն վարդապետության աստիճան տալու կարգը մեր Եկեղեցում: Հաճախ եղել են խախտումներ, որոնց դեմ պայքարել են, օրինակ, Միսիրար Գոշ (ԺԳ դար), Գրիգոր Տառնացի (ԺԵ դար) եռամեծ վարդապետները, որպես «նախանձաւորս անստերիւր և անբերի պահպանութեան կարգացն տալոյ զգաւագան մասնաւոր և ծայրագոյն իշխանութեան վարդապետաց»: Նրանք պայքարել են խեղաթյուրումների դեմ և պահանջել են միայն արժանավորներին տալ գավազանի իշխանություն և ծայրագույն վարդապետի գիտական պատվավոր կոչումը:

Մեծ վարդապետ Միսիրար Գոշը իր Դատաստանագրքի առաջին մասի երրորդ գլխում, «Յաղագս դատաստանաց վարդապետաց» բաժնում, ԿԱՆՈՆԱԴՐՈՒՄ է ՎԱՐԳԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ (էջ 88—93): Միսիրար Գոշը առաջին հերթին շեշտը դնում է վարդապետներ-

րի ուսումնականության վրա. «Եւ վարդապետի եղիցին ըստ իրաւանց նախակրթեալի Հին և նոր Կտակարանաց և Կանոնական հրամանաց... Յերկուց և յերից վարդապետաց կոչեսցին ի պատիւ հրամանի», այսինքն անփազն երկու կամ երեք վարդապետ միասին պետք է «վարդապետական իրաւունք» տալին վարդապետական նոր քեկնածուին:

Մի այլ կանոնով Մխիթար Գոշը պահանջում է վարդապետից «զհամար ուսման Գրոցն... քէ ո՛ր և կամ յումմէ զգիրս զիրաւաւշիր բարեցաւ ուսմամբ... զի մի՛ պատրեւայ անկատարս զպատիւ առեալ՝ բազում վնասս խակութեամբն գործիցեն»:

Մխիթար Գոշի կանոններից երևում է, որ անցյալում մեծ գոյություն էին ի գործ դնում, որ տգետները վարդապետական կոչում չստանային, իսկ երբ ոմանք այլ նախապահներով, կանոններին անհամապատասխան կերպով տիրանան այդ սուրբ աստիճանին, «զայնպիսիս լոնցուցանել իրաւացի դատաստանաւ, առնուլ ի ձեռանէ զգաւազանն՝ տայցեն ցուպ շրջողութեան», — ասում է Մխիթար Գոշը:

Մխիթար Գոշից հետո Գրիգոր Տաթևացին կազմել է «ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՏՎԶՈՒԹՅԱՆ ԾԻՍԱԿԱՆ ԿԱՐԳԸ» (Օրմանյան, «Ազգապատում», հատ. Ա, էջ 2030) «Գիրք գաւազան տալոյ աշակերտացն ճշմարիտ բանին փարզութեան, նախ զմասնաւոր իշխանութեան՝ որ է չորս աստիճան, և ապա զծայրագոյնն՝ որ է տասն չորս աստիճան» («Մաշտոց», Վաղարշապատ, 1876 թ., էջ 66):

Ըստ Օրմանյան սրբազանի վկայության, Տաթևացու հորինած կանոնը «Տաթևացիին միտքին ստեղծումն է»: «Հայ վարդապետությունը, — գրում է Օրմանյանը, — որ աստվածաբանության մագիստրոսի աստիճանին կպատասխանե, Տաթևացիին դրությամբ ամբողջապես եկեղեցական կերպարանի վերածված է, 14 աստիճաններու դասավորությամբ... մեկը 4 և մյուսը 10 աստիճաններով, որ Փոքր և Մեծ, կամ Մասնավոր և Մայրագոյն անուններով կորոշվին» («Ազգապատում», հատ. Ա, էջ 2030):

Վարդապետական մասնավոր աստիճանը տրվում էր «ուսմանց ընթացքը լրացնողներուն, իսկ ծայրագոյնը պահված էր վարդապետաց վարդապետներուն, որոնք վանքերու կամ վանական դպրոցներու կամ վարդապետանոցներու մեջ իրենց հատուկ աշակերտություն մը կկազմէին»: Օրմանյան սրբազանը իր հերթին իր վրդովմունքն է հայտնում, որ Կոստանդնուպոլսի Պատրիարքարանում ևս դժբախտաբար չի պահպանվել մասնավոր և ծայրագոյն վարդապետական աստիճան տալու նվիրական «սկզբունքը», երբ «անուաներու անգամ ծայրագոյն աստիճան կտրվի»: Վերջին ժամանակներում այս ընդհանուր երևույթ է եղել դժբախտաբար և շատ ֆչերը միայն եղել են արժանավոր:

Այսօր էլ պատկերը տարբեր չէ անցյալից: Վեհափառ Հայրապետը, նախանձախնդիր Հայ եկեղեցու կարգերի պահպանման և պայծառացման, Մխիթար Գոշի, Գրիգոր Տաթևացու, Օրմանյանի և այլ լուսաբնակ եռամեծ վարդապետների օրինակով և շնչով, ուզում է վերականգնել մեր եկեղեցու ծոցում վարդապետական գավազանի մասնավոր և ծայրագոյն իշխանության տվչության կարգը, շեշտը դնելով ամենից առաջ մեր նոր հոգեւորականների կոչման գիտակցության, խոր ու բազմակողմանի զարգացման և բարոյական նկարագրի վրա:

Մեր եկեղեցու բարեգարդության և բարեկարգության ամենափիմնական խնդիրներից մեկը մեր հոգեւորականության, եկեղեցու պաշտոնեության պատրաստության հարցն է: «Մեք առանկ ֆան զամենեսեան ունիմք պէտս հոգւոց բժշկութեան» (Շնորհալի):

Հայ եկեղեցու գարբոնք, բարեկարգությունը նշանակում է ամենից առաջ եկեղեցու պաշտոնեության բարեկարգություն և պատրաստություն: Լուսամիտ, զարգացած, հավատավոր և կարգապահ հոգեւորականությունը միայն կարող է եկեղեցին պահել բարեկարգ և բարեգարդ վիճակում: Ս. Սահակ Պարթև գրել է. «ՅՈՐԺԱՄ ՈՒԽՏՆ ՈՐ ԳՆՈՒԽՆ Է ԵԿԵՂԵՑԻՈՅ, ԸՆՏԻՐՔ ԵՒ ՊԻՏԱՆԻՔ ԼԻՆԻՑԻՆ, ԵՒՍ ԱՌԱՒԵԼ ԺՈՂՈՎՈՒՐԿԻ»:

